Հանրապետական
Մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Վերապատրաստող, մենթոր՝ Նաիրա Ղազումյան

Ուսուցիչ՝ Մելանյա Չաբուխյան

2023

Բովանդակություն

Ներածություն……....….3

Գլուխ 1

Արժեքային համակարգի դերն ու նշանակությունը հանրակրթական դպրոցում……..……5

Գլուխ 2

Արժեքային համակարգի ձևավորումը աշխարհագրություն առարկայի դասավանդման շրջանակներում……...……10

Եզրակացություն……..……17

Գրականության ցանկ……18

Ներածություն

Թեմայի արդիականությունը. մեր օրերի համաշխարհայնացման շրջանում մեծ վտանգ են ներկայացնում հին արժեքների, տվյալների հնարավոր կորուստները, ինչպես նաև նոր տվյալների ու արժեքների թյուրըմբռնումը: Հասարակության զարգացմանը զուգահեռ սոցիալական փոփոխություններն առաջացնում են արժեքային համակարգի խնդիրներ: Արժեքների անորոշ ըմբռնումը փոխում է վերաբերմունքը կյանքի, երկրի, ընտանիքի, աշխատանքի նկատմամբ, հանգեցնում է սոցիալական պասիվության: Կարևոր է ունենալ արժեքների և արժեքային կողմնորոշումների հստակ համակարգ, քանի որ արժեքները որոշում են նպատակները և, ամենակարևորը, դրանց հասնելու ուղիներն ու միջոցները: Այս ամենը կձևավորի ողջ հասարակության մշակույթը: Ուստի մանկավարժության կարևորագույն պահանջներից է արժեքային համակարգի ձևավորումը: Անհրաժեշտ է անհատին ոչ միայն գիտելիքներով զինել, այլև նրա մեջ բարոյական որոշակի արժեքներ ձևավորել:

Աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը աշխարհագրություն առարկայի դասավանդման ընթացքում:

Այս նպատակով աշխատանքում առաջադրվել է հետևյալ **հետազոտական հարցը.** արժեքային համակարգը ինչպիսի՞ ազդեցություն կունենա կարողունակությունների ձևավորման ու զարգացման վրա:

Ելնելով աշխատանքի նպատակից՝ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ հոգեբանամանկավարժական, մեթոդական գրականությունը, ուսուցիչների վերաբերմունքը՝ ուղղված սովորողի մեջ արժեքային համակարգի ձևավորմանը, առկա փորձին:
2. Բացահայտել արժեքային համակարգի ձևավորմանն ու զարգացմանը նպաստող պայմանները, խոչընդոտող գործոնները:
3. Ուսումնասիրել արժեքային համակարգի ներդրման ուղիներն ու միջոցները աշխարհագրության դասերին:
4. Կատարել հետազոտության արդյունքների վերլուծություն:

Հետազոտության օբյեկտը սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումն է:

Հետազոտության առարկան արժեհամակարգի ձևավորումն է առարկայի դասավանդման ընթացքում:

Արժեքային համակարգի կարևորագույն արժեքը հայրենասիրությունն է, որը, միանշանակ, լավագույն կերպով կարելի է սերմանել աշխարհագրության դասերին: Եվ ինչպես Ռաֆֆին է ասել՝ «Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարտացի սիրել այն»:

Ուսուցիչը պետք է կարողանա ընդլայնել սովորողի աշխարհաճանաչողությունը, սովորեցնել սիրել աշխարհն ու հայրենիքը:

Կառուցվածքը. աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից և գրականության ցանկից:

Օգտագործված մեթոդները, գործիքները. աշխատանքում իրականացվել է որակական հետազոտություն:

Իրականացման ժամանակահատվածը՝ 19.10.2023թ.-16.11.2023թ.:

Հետազոտության համար որպես թիրախ խումբ են ծառայել Գետահովիտի միջնակարգ դպրոցի 7-9-րդ դասարանները:

Գլուխ 1. Արժեքային համակարգի դերն ու նշանակությունը հանրակրթական դպրոցում

Մարդկային քաղաքակրթությունն իր զարգացման յուրաքանչյուր փուլում ունեցել է իր արժեքային համակարգը: Այս առումով կարելի է պնդել, որ յուրաքանչյուր արժեքային համակարգ համապատասխանում է հասարակության զարգացման որոշակի մակարդակին: Առկա է նաև հակադարձ կապը, երբ զարգացումն իր հերթին փոփոխություններ է մտցնում արժեքային համակարգի շարժման մեջ: Հասարակական զարգացումը լինելով բազմակողմ և բազմաշերտ հասկացություն իր վրա կրում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնների ազդեցությունն, ըստ որում՝ ժամանակի և տարածության մեջ մեծանում է արտաքին գործոնների դերը, ինչը պայմանավորված է աշխարհում տեղի ունեցող գործընթացներով և, առաջին հերթին, գլոբալացմամբ և տնտեսական ինտեգրմամբ:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, մասնավորապես՝ աշխարհագրությունը:

Արժեքային կողմնորոշումները ցանկացած հասարակության մշակույթի անվիճելի կարևոր տարրերն են: Այս համատեքստում հասարակության համար մշակույթը կարող է սահմանվել որպես արժեքների և արժեքային կողմնորոշումների ամբողջություն:

Արժեքային համակարգը առավելապես կարևոր է ինչպես անհատի, այնպես էլ ցանկացած սոցիալական խմբի և ողջ հասարակության համար: Մյուս կողմից, արժեքային կողմնորոշումները մարդը ճանաչում է որպես կյանքի ռազմավարական նպատակներ և ընդհանուր աշխարհայացքի ուղեցույցներ, այսինքն՝ կողմնորոշումներ, որոնք որոշում են մարդու վարքագիծը:

Ազգային արժեհամակարգի ձևավորումը հանդիսանում է կրթական բարեփոխումների հիմքը: Այսօր ազգային դաստիարակության մասին խոսելիս, հատուկ ուշադրություն պետք է դարձնել ազգային դաստիարակության էության ճիշտ ըմբռնմանը: Ազգային ու համամարդկային արժեքները յուրացվում են ողջ կյանքի ընթացքում՝ ոչ միայն հատուկ այդ նպատակին ծառայող քարոզչության ու տարաբնույթ գործունեության

ընթացքում: Մարդն ընդօրինակում է ազգային ապրելակերպը, յուրացնում լեզուն, մշակույթը, հոգեբանությունը և բազմաթիվ այլ որակներ՝ աստիճանաբար ձևավորվելով որպես տվյալ ազգի լիարժեք անդամ: Ազգայինը վերաբերում է տվյալ ազգի հոգեբանության, լեզվի, դավանանքի, առհասարակ՝ զուտ ազգային արժեքների խտացմանը, դրանից բացի ենթադրվում է նաև համամարդկային արժեքների խտացում: Այսօր կրթական համակարգի գերխնդիրն է ապահովել ազգայինի և համամարդկայինի մեկտեղումը: Հիրավի, ազգային արժեքների պահպանումն այսօր, երբ տարբեր ժողովուրդներ ու ազգեր ձուլվում, անհետանում են, գերակա ռազմավարական նշանակություն ունեցող հիմնախնդիր է ազգային արժեհամակարգի ձևավորումն ու զարգացումը: Այսօր վտանգված է սովորողների ազգային գաղափարախոսությունը: Նկատվում է նահանջ որոշ արժեքներից, որոնք անհրաժեշտ են կրթադաստիարակչական համակարգում բովանդակային հագեցվածություն ապահովելու համար: Դպրոցի կարևորագույն նպատակներից է ազգային արժեհամակարգի ձևավորումը: Տեղին է ազգապահպան գործում վկայակոչել հայոց մեծերին, ովքեր բոլոր դարաշրջաններում ջանացել են իրենց անհատականությամբ ամրապնդել ազգային ոգին, հպարտությունը, հայրենիքի գաղափարն ու այդ գործին անմնացորդ նվիրվելը: Ժամանակին ճիշտ է բնութագրվել հայ մեծ լուսավորիչ մանկավարժ Խ.Աբովյանի կողմից ազգային կրթության արժեվորումը. «Հայ ժողովուրդն ինքնըստինքյան ոչ միայն ամենաքաղաքակրթվածն է, այլև հենց այն ազգությունն է, որի բնավորությունն ու ապրելակերպը նպաստում են, որ նա լուսավորություն տարածի ամենուր, հարևանների մեջ»:

Հայաստանի աշակերտների արժեքային ձևավորումը ներառված է ՀՀ Միջնակարգ կրթության պետական չափորոշչում[1], որի համաձայն անհրաժեշտ է ձևավորել այնպիսի աշակերտ, ով պետք է՝

- գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու շանակությունը և լինի դրանց կրողը,
- հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- գիտակցի, որ գիտությունը, արդի տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

[1] Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=42195, 04.11.2023թ.:

- գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,
- կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,
- կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին ու ճշմարիտը,
- գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,
- գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,
- հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,
- անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,
- դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,
- մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

Ն.Ի.Լապկինը առաջարկում է արժեքների դասակարգում ըստ հետևյալ հատկանիշների՝

- ըստ անհատի կյանքում ունեցած դերի՝ վերջնական և գործիքային,
- ֆունկցիոնալ կողմնորոշման՝ ինտեգրում և տարբերակում, հաստատում և մերժում,
- մարդկանց կարիքներին համապատասխան՝ կենսական հաղորդակցման, իմաստալից,
- ըստ քաղաքակրթության տեսակի՝ ավանդական, ժամանակակից համամարդկային արժեքներ:

Ընդհանուր առմամբ, բոլոր արժեքները պայմանականորեն կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ հոգևոր և նյութական:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած

մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Շատ կարևոր է իրական արժեբանական արժեհամակարգի ճիշտ ընկալման հիմնահարցերի լուսաբանումը, որով էլ պայմանավորված է շրջապատում իրական արժեքների նկատմամբ ճիշտ ու համարժեք վերաբերմունքի դրսևորումը: Վերջին ժամանակներում շատ կարևոր է վեր հանել արժեքի հատկանիշները, բացահայտել, արժեքի էությունը, արժեբանական ընկալումները, առանձնահատկությունները, հիմնական բնութագրիչները, հասկացություններն ու գիտական հիմնավորումները: Հասարակության մեջ տեսականորեն ամրագրված արժեքները վերահիմաստավորվում են մարդկանց առօրյա կյանքում: Այդ ամբողջ գործընթացի իրականացման մոդելը մեր պատկերացմամբ հետևյալն է.

1.Պատմականորեն ձևավորված և սերնդեսերունդ փոխանցված արժեքների ամրագրումն ամենուր և հատկապես հանրակրթության ոլորտում

2.Արժեքների ճիշտ ընկալումը

3.Արժեքների իրացման համար երաշխիքների ապահովումը[2]

Այս համատեքստում տեղին ենք համարում կատարել մի շարք կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող շեշտադրում. ձևավորել և ամրագրել անցյալի արժեքների արժեբանական ժառանգությունը, արդի պահանջներին համապատասխան կիրառելու գործնական ունակությունների ձեռքբերումը, որը և համարվում է հանրակրթության ոլորտի հիմնական գերխնդիրը:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու

[2] file:///C:/Users/USER/Desktop/Bagdasaryan-Ellada-Azgayin-krtutyun.pdf, 12.11.2023թ.:

երջանկությունը»:[3]

Այսպիսով, ազգային արժեհամակարգով ձևավորված սերունդը կունենա արժանապատիվ ապագա: Հավատարիմ մնանք մեր ազգային արժեհամակարգին, ազգային մտածելակերպին և վստահորեն կերտենք փայլուն ապագա՝ ամրագրելով մեր հաղթանակները: Այսօր շատ կարևոր է դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումն ու զարգացումը: Դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումը մանկավարժական ներգործության տեսանկյունից ենթադրում է այդ գործընթացի դիտարկումը նրա բովանդակային բաղադրատարրերի ամբողջության մեջ: Ուսուցման պայմաններում արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացն ունի երկկողմանի բնույթ. այդ գործընթացի արդյունավետության վրա ազդում են և՛ արժեքների յուրացման նկատմամբ սովորողների մղումն ու ակտիվ գործունեությունը, և՛ այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի գործունեությունը: Սովորողների մեջ արժեքային կողմնորոշումների ձևավորման իրականացման գործընթացի բովանդակային կողմը ներառում է նրանց հոգեկանում գերակա արժեքները, ինչպես նաև մանկավարժական ներգործության միջոցների համալիրը, որն ակտիվացնում է դպրոցականի՝ արժեքների յուրացմանը միտված գործունեությունը:

[3] Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978, 59 с.

Գլուխ 2. Արժեքային համակարգի ձևավորումը աշխարհագրություն առարկայի դասավանդման շրջանակներում

Անձի արժեքային համակարգը կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Այդ գործընթացում հատկապես կարևորվում է սոցիալական խմբի արժեքներից անցում դեպի անձնային արժեքներին: Արժեքային համակարգի ձևավորման գործում անհրաժեշտ է հաշվի առնել օբյեկտիվ ու սուբյեկտիվ տարբեր գործոններ, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները:

Արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ուղղված գործունեության կազմակերպումը չի սահմանափակվում միայն տվյալ դեպքում կրթության բովանդակության մեջ այս կամ այն արժեքի ներմուծմամբ: Այն ենթադրում է մանկավարժական ներգործության ակտիվ ձևերի ու միջոցների օգտագործումը: Արժեքային կողմնորոշումների ձևավորման նպատակով անձի վրա արտաքին ներգործության բազմազանության մեջ առավել հաճախ են առանձնացվում այդ գործընթացի իմացական, ճանաչողական, աֆեկտիվ և վարքային բաղադրատարրերը. դա բազմիցս արտացոլվում է և՛ մանկավարժական, և՛ հոգեբանական հետազոտություններում: Իմացական բաղադրատարրերը համոզմունքների, պատկերացումների, կարծիքների ամբողջությունն է, որը ձևավորվում է իմացական – ճանաչողական գործընթացների, սոցիալական փորձի արդյունքում:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ,

հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»:[4]

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ

[4] Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 22 էջ:

շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն աշխարհագրությունը, որով սովորողը ճանաչում է տարբեր երկրների ու սեփական երկրի ծագումն ու զարգացումը, դրանով էլ մոտենում է ստեղծված ու ստեղծվող արժեքներին ու դառնում դրանց կրողը: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում աշխարհագրության դասավանդումը դուրս է գալիս սոսկ որպես ուսումնական առարկա լինելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել: Աշխարհագրությունը, իր անհամար հարստությունները փռելով սովորողների առջև, անուղղակիորեն նրանց դաստիարակում է այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, իսկ աշխարհագրական հայտնագործություններն ու նվաճումները, դրանց սերմանումը սովորողների մեջ՝

հարստացնում են նրանց հոգևոր պաշարները և հոկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով: Իբրև աշխարհագրության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը համաշխարհային տեղեկատվությանն ու մշակույթին՝ որպես մշակույթի մի տարատեսակի:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ևս անգնահատելի է աշխարհագրության դերը: Սովորողը համաշխարհային արժեքներն ու մշակույթը ճանաչելով միայն կարող է համեմատականներ անցկացնել, այդպիսով՝ սիրել ու արժևորել սեփականը երկրինը:

Աշխարհագրությունը նպաստում է սովորողի աշխարհաճանաչողություն, ազգային ինքնագիտակցություն, տարբեր ազգերի և սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը աշխարհի պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային ու համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը: Աշխարհագրության իմացության միջոցով է ձևավորվում ազգային ու գլոբալ մտածողություն, պատասխանատու և սեփական տեսակետն ու դիրքորոշում ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող անձ ու քաղաքացի:

Համաձայն Վ. Աֆանասևի՝ ընտանիքում, դպրոցում, անձի ձևավորման գործընթացն իրականանում է նախևառաջ «տեղեկատվական ուղիով անձին ուրիշների կողմից ստացվող համապատասխան տեղեկություն փոխանցելու միջոցով»:[5] Մշակույթի, հասարակական արժեքների համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրն ընդունված է դիտարկել որպես հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափություն:

Աշխարհագրությունը յուրահատուկ տեղ է զբաղեցնում գիտությունների ամբողջական համակարգում, քանի որ նրա հետազոտության օբյեկտները շատ բազմազան են: Աշխարհագրությունը միավորում է բազմաթիվ ոլորտների իմացությունը՝ օգնելով գիտնականներին և հետազոտողներին ավելի լավ հասկանալ մեր զարմանահրաշ մոլորակը:

Աշխարհագրությունը կոչվել է «բոլոր գիտությունների մայր»՝ մարդկանց տալով շատ «ինչու»-ների պատասխաններ: Աշխարհագրական գիտելիքները օգնում են մարդկանց

---

[5]Афанасев В. Г., Социальная информация и управление обществом. М.: Политиздат, 1975.

ստանալ տեղեկատվություն աշխարհի մասին: Դպրոցական շատ առարկաներ հիմնված են աշխարհագրական գիտելիքների վրա: Աշխարհագրական գիտելիքների յուրացման արդյունքում կարևոր է, որ սովորողները գնահատեն շրջակա միջավայրը, դրա պահպանումն ու ռացիոնալ օգտագործումը: Աշխարհագրական կրթությունը մեծացնում է սերը աշխարհի, բնակավայրի, տարածաշրջանի, երկրի նկատմամբ: Այս առումով ևս կարևորում ենք առարկայի կրթադաստիարակչական և արժեքային դերակատարությունը անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում:

Մարդկությունն այսօր կանգնած է անընդհատ ահագնացող հիմնախնդիրների դեմ հանդիման, որոնք շոշափում են մարդկության ապագան և դրանց թելադրանքով աշխարհագրությանը ներկայացվում է նոր սոցիալական պատվեր, որը կատարելու համար նա պետք է նոր, տեսական վերածնունդ ապրեր: Այդ վերածնունդը սկսվել է անցյալ դարի կեսերից և այսօր արդեն վերածնված աշխարհագրությունը հանդես է գալիս նոր բովանդակությամբ և սոցիալական առաջնային կարևորություն ունեցող հիմնախնդիրների գիտատեսական և գործնական լուծման մեծ ներուժով:

Մարդը, ուսումնասիրելով իր հայրենի մոլորակը, իր համար բացում է գիտելիքների նոր հորիզոններ: Աշխարհագրությունն արվեստ է, քանզի ստեղծում է դժվար կրկնվող նկարագրություններ, միաժամանակ և՛ գիտություն է. օգտագործում է գիտական հիմնավորումներ՝ կանխատեսելու համար:

Աշխարհագրությունն օգնում է հասկանալ, որ աշխարհն անչափ փոքր է միջուկային հակամարտությունների և բավականին ընդարձակ՝ խաղաղ հարաբերությունների համար: Մարդկության և Երկիր մոլորակի ապագան կախված է աշխարհագրական հետազոտություններից ու կանխատեսումներից: Ինչպես Բ. Ռոդմանն է նկատում, ապագան կարելի է ընդամենը աճեցնել, ինչպես աճեցնում են մշակաբույսերը, երեխաներին, բյուրեղները՝ հաշվի առնելով դրանց ինքնազարգացման ու ինքնակարգավորման օրինաչափությունները: Աշխարհագրությունն է զարգացնում բազմակողմանի ինտեգրալ հայացք՝ ուղղված աշխարհին: Պատահական չէ, որ ինչ-որ ժամանակ աշխարհագրության մասին խոսել են՝ որպես գիտությունների թագուհու:[6]

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը

[6] https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-24/dee6212a623188a4f37ba43e276caf6f.pdf, 13.11.2023թ.:

երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Դասի ընթացքում արժեքային համակարգի ձևավորման նպատակով նաև կարևոր է ինքնուրույն և խմբային աշխատանքների կազմակերպումը:

Ուսուցման ակտիվ մեթոդներից հաճախ ենք կիրառում՝ մտագրոհ, Վեննի դիագրամ, ԳՈՒՍ, T-աձև ու M-աղյուսակներ, դերային խաղ, բանավեճեր, խճանկար, քառաբաժան մեթոդները:

Օրինակ՝ մտագրոհ մեթոդը կիրառելիս սովորողները թվարկում են ուսումնասիրվող նյութի հետ առնչվող բառեր և գաղափարներ, օրինակ՝ աշխարհ, երկիր, մշակույթ, հայրենիք, պետություն հասկացություններով:

Վեննի դիագրամի ժամանակ աշակերտները համեմատում են երկու կամ ավելի երկրներ, մշակույթներ:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես

դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»[7]:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

[7] Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979, 65 с.

Եզրակացություններ

Հանգամանորեն ուսումնասիրելով և վերլուծելով «Արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում» թեման՝ շեշտը դնելով աշխարհագրություն առարկայի ընթացքում թեմայի ուսումնասիրման վրա՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- ✓ Արժեքային կողմնորոշումները ցանկացած հասարակության մշակույթի անվիճելի կարևոր տարրերն են: Այս համատեքստում հասարակության համար մշակույթը կարող է սահմանվել որպես արժեքների և արժեքային կողմնորոշումների ամբողջություն: Արժեքային համակարգը առավելապես կարևոր է ինչպես անհատի, այնպես էլ ցանկացած սոցիալական խմբի և ողջ հասարակության համար:
- ✓ Անհրաժեշտ է ձևավորել և ամրագրել անցյալի արժեքների արժեբանական ժառանգությունը, արդի պահանջներին համապատասխան կիրառելու գործնական ունակությունների ձեռքբերումը, որը և համարվում է հանրակրթության ոլորտի հիմնական գերխնդիրը:
- ✓ Արժեքային համակարգի ներդրումն իր բնույթով այն եզակի գործընթացն է, որն իրար է կապում գիտությունը, կրթությունը, տնտեսությունը և բոլոր այն բնագավառները, որոնց հիմքը դրվում է հանրակրթական դպրոցում: Արժեհամակարգում ամբողջացվում են այն գիտելիքները, որոնք իրազեկ, արդյունավետ աշխատող ուսուցիչը և պարզապես հասարակության կրթված անդամը պետք է ունենան վաղվա օրվա համար:
- ✓ Այսպիսով, թեմայի ուսումնասիրության արդյունքներն ամփոփելով՝ կարող ենք ասել, որ աշխարհագրություն առարկան շատ կարևոր նշանակություն ունի արժեքային համակարգի ձևավորման գործում. մարդկության և Երկիր մոլորակի ապագան կախված է աշխարհագրական հետազոտություններից ու կանխատեսումներից:

Գրականության ցանկ

1. Լ.Վալեսյան «Հասարակական աշխարհագրության ներածությունը», Երևան, «Լույս», 1999:
2. Լ.Վալեսյան «Աշխարհագրական կանխատեսում», Երևան, 2008:
3. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=42195, 04.11.2023թ.:
4. Ջ. Դեմկո, Վ.Աննենկով «Աշխարհագրության արվեստն ու գիտությունը», Երևան, 2007:
5. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ.:
6. Афанасев В. Г., Социальная информация и управление обществом. М.: Политиздат, 1975.
7. Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978, 452 с.
8. Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979, 458 с.
9. file:///C:/Users/USER/Desktop/Bagdasaryan-Ellada-Azgayin-krtutyun.pdf, 12.11.2023թ.:
10. https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-24/dee6212a623188a4f37ba43e276caf6f.pdf, 13.11.2023թ.: